

Այցելություններ Հանրային կարգավիճակ ստացած ՀՀ համայնքային գրադարաններ

Ի կատարումն ՀՀ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 28.02.2013թ. «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման, մի շարք գրադարաններ ստացել են Հանրային գրադարանի կարգավիճակ:

Հավատարմագրված գրադարանները պետության աջակցությամբ նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրի շրջանակներում ստացել են գրադարանային գույք և համակարգչային տեխնիկա:

Կատարված աշխատանքներին տեղում ծանոթանալու և իրավիճակը գնահատելու նպատակով 2017թ. Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցների կողմից այցելություններ են իրականացվել Էջմիածնի, Ապարանի, Սպիտակի, Ստեփանավանի Հանրային կարգավիճակ ստացած գրադարաններ: Նշված բոլոր գրադարաններում արձանագրվել է բարեկարգ վիճակ, առկա են ծրագրով տրամադրված գույքն ու համակարգչային տեխնիկան:

2016 թվականին հավատարմագրվել և Հանրային գրադարանի կարգավիճակ են ստացել Շիրակի մարզի Ամասիայի և Լոռու մարզի Օձունի համայնքային գրադարանները:

2017թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցները այցելեցին վերոնշյալ երկու գրադարաններ: Հանձնաժողովը արձանագրեց Շիրակի մարզի Ամասիայի և Լոռու մարզի Օձունի համայնքային գրադարանները գտնվում են բարեկարգ վիճակում, իսկ ծրագրով տրամադրված գույքն ու համակարգչային տեխնիկան ամբողջությամբ առկա են և ծառայում են իրենց նպատակին՝ ստեղծելով հրապուրիչ և հարմարավետ միջավայր ընթերցողների համար:

Օձունի համայնքային գրադարանում ձևավորված ընդարձակ և լուսավոր ընթերցասրահը հազեցած էր համակարգչային տեխնիկայով: Գրադարանում շարունակվում են գրապահոցային լրացուցիչ տարածքների ձևավորման աշխատանքները: Հավատարմագրման ծրագրի շրջանակներում Օձունի գրադարանին հատկացված նոր գրականության լավագույն հրատարակությունները ցուցադրված էին հարմարավետ ցուցափեղկերում:

Ամասիայի համայնքային գրադարանում ևս ձևավորված էր համակարգիչներով հազեցած գեղեցիկ ընթերցասրահ, տրամադրված գույքը տեղաբաշխված էր համապատասխան տարածքներում՝ ընթերցողների սպասարկումը նպատակային կազմակերպելու համար:

Գրադարանում առկա ջեռուցման համակարգը, ըստ գրադարանի տնօրենի, կշահագործվի գրադարանի խնայողությունների հաշվին

